

ներէն մին Պատանատեղիին արեւելքը կ'իյնայ, աւետարանական ու է յիշատակութիւն մը չպարունակեր. Ուսակրաց շինութեան գործերէն կը նկատուի և նըշանաւոր է իր ճարտարապետական կանոնաւորութեամբը, Բիւզանդական նկարներով ճոխապէս զարգարուած է (Bar. gd. էջ 86): Նոյն եկեղեցիին կողակին կեդրոնը կը բարձրանայ աւագ խորանը և մօտը կը գտնուի պատրիարքական աթոռը: Դրան քով կը տեսնուի վարդազարդով զրուագուած յատակ մը և անոր մէջ ալ կիսագունց մը, որ ըստ աւանդութեան, կը համարուի երկրիս կեդրոնը կամ պորտը: Այս զրոյցը իրեն յենակէտ ունի սաղմոսի հետեւեալ համարը. «Աստուած, թագաւոր յառաջ քան զյաւիտեանս, որ արարեր զփրկութիւն ի մեջ երկրի (ՀԳ. 12): Այս կիսագունցը զրուած է սպիտակ մարմարէ ամանի մը վրայ որ յատակէն 50 սմ. վեր կը բարձրանայ (Ham. էջ 261-62): Յովհաննէս եպոս. Երուսաղէմացի հետեւեալ կերպով կը բացատրէ յունաց եկեղեցիին այս կիսագունցին տեղը. «Եւ ի դրանէն Ին. ոտք գնալով գտանի փոսիկ մի ի մէջ մարմարեայ քարի, որ եւ է ի ներքոյ մեծի քարեայ գմբէթին՝ ուր նշանակի մեջ աշխարհի զոյ տեղս այս » (Հան. էջ 186):

Միջին դարուն ան կը կոչուէր կարկին(*) (compas) և այն ժամանակ կը գտնուէր կոստանդիանոսի մայր եկեղեցիին տեղւոյն վրայ՝ վանական Մոտեստոսի կողմէն զատ զատ շինուած չորս եկեղեցիներէ շրջապատուած բակին մէջտեղը (Mis. հատ. Բ. էջ 350):

Գիտնական մը՝ Herr Schick, ինամոտ գծագրու-

(*) «Մի՛ ըստ արճաոյ փիլիսոփայից պատրիարքիմ, որք գառագղին եւ կարկին... եւ այլ ինչ այսպիսեաց սոցին նմանեցուցանեն գերկի» (Ոսկ. Ես. Թ. Գէ. Ես.):